

ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

ՀԻՄՆԱՅԻՆ ԱՄԵՐԻԿԱՅԻ ԵՐԵԹ ԹԵՄԵՐՈՒ ԱՌԱՋՆՈՐԴՆԵՐՈՒ ԵՒ ԱԶԳԱՅԻՆ ՎԱՐՉՈՒԹԵԱՆՑ ԱՏԵՆԱՊԵՏՆԵՐՈՒ ԺՈՂՈՎ

Չորեքշաբթի եւ Հինգշաբթի, Յուլիս 23-ին եւ 24-ին, Գանատայի Հայոց Թեմի Ազգային Առաջնորդարանը հիւրընկալեց Հիւսիսային Ամերիկայի երեք Թեմերու Առաջնորդներն ու Ազգային Վարչութեանց Ատենապետները:

Ժողովին մասնակցեցան Միացեալ Նահանգներու Արեւելեան Թեմի Առաջնորդ Գերաշնորհ Տ. Օշական Արք. Զօլոյեան, Արեւմտեան Թեմի Առաջնորդ Գերաշնորհ Տ. Մուշեղ Արք. Մարտիրոսեան եւ Թեմիս Առաջնորդ Գերաշնորհ Տ. Խաժակ Արք. Յակոբեան, ինչպէս նաեւ Ազգային Վարչութեան ատենապետներ՝ Պրն. Ճաք Մարտոյեան (Արեւելեան), Տոքթ. Կարօ Յակոբեան (Արեւմտեան) եւ Տոքթ. Ժան Առաքելեան (Գանատա) եւ Թեմիս Ազգային Վարչութեան անդամներ Տոքթ. Կարպիս Հարպոյեան, Պրն. Սիմոն Փօլատեան եւ Տիկին Օսիկ Միսիսարթինեան:

Հիւսիսային Ամերիկայի երեք Թեմերու այս ժողովը գլխաւորաբար անդրադարձաւ Հայց. Առաքելական եկեղեցւոյ առաքելութենէն բխող աշխատանքի դաշտերուն, յատկապէս նկատի ունենալով մեր ժողովուրդին հոգեմտաւոր պահանջները եւ հետեւեալ աշխատանքային դաշտերը.-

Կրօնական Դաստիարակութիւն, Երիտասարդական, Կրօնական Հրատարակութիւններ, սարկաւազաց եւ դպրաց պատրաստութիւն, ծովխերու վերակազմակերպում եւ նոր ծովխեր, Հայեցի Դաստիարակութիւն, Կաթողիկոսարան եւ թեմեր, միջ-թեմական փոխ-յարաբերութիւններ, Կիլիկեան Թեմի 50-ամեակ, Ղեւնդեանց Համագումար, Ամուսնալուծում եւ եկեղեցի, Միասեռականութիւնը եւ եկեղեցին, միջ-եկեղեցական եւ միջ-կրօնական յարաբերութիւններ, եւ ի վերջոյ յառաջիկայ Դեկտեմբերին տեղի ունենալիք Ազգային Պատգամաւորական Ընդհանուր Ժողովի հարցերը:

Վերոյիշեալ հարցերուն հետապնդման համար, մշակուեցան ծրագիրներ եւ աշխատանքի ուղեգիծ, որոնց հետամուտ պիտի ըլլան նշանակուած յանձնախումբերը:

ԴԻՄՆ ԱԶԳԱՅԻՆ ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆԻ